

Միջոցառում՝ նվիրված հայ-չինական մշակութային կապերին և չինական նոր տարուն

Փետրվարի 23-ին, Հայաստանի ազգային գրադարանում Չինական մշակույթի և գիտության կենտրոնի, ՀՀ Ուշուի ֆեդերացիայի հետ համատեղ կազմակերպվել էր միջոցառում, որը նվիրված էր Չինաստանի Ամանորյա գարնան տոնին և հայ-չինական դարավոր կապերին:

Միջոցառմանը մասնակցում էր Չինաստանի դեսպանատան պատվիրակությունը, դեսպանատան խորհրդական Լո Շիայունի գլխավորությամբ:

Բացման խոսքով հանդես եկավ Ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը: Նա խոսելով հայ չինական համագործակցության մասին նշեց, որ անցյալ տարի համագործակցության հուշագիր է կնքվել չինական «Հանբան» կենտրոնի հետ, որը չինարեն լեզվի և մշակույթի տարածման ամենախոշոր կենտրոնն է աշխարհում: Ծրագրի շրջանակներում գրադարանը ստացել է չինական գրականություն՝ ինքնուսույցներ, որոնց շնորհիվ ընթերցողները կարող են ոչ միայն չինարեն ուսումնասիրել, այլև ծանոթանալ Չինաստանի հարուստ պատմությանը և մշակույթին:

Միջոցառման սկզբում Ուշուի ֆեդերացիայի սաները ներկաներին ցուցադրեցին չինական մարտարվեստը: Ուշագրավ էր նաև դպրոցականների կողմից չինարեն բանաստեղծությունների ընթերցումը:

Չինական կենտրոնի տնօրեն Իգարելլա Մուրադյանը խոսելով հայ-չինական կապերի մասին նշեց, որ դրանց ամրապնդումն ու խորացումը կարևոր է երկու կողմերի համար, որը դարերի պատմությունն ունի:

Միջոցառման ժամանակ պարոն Լո Շիայունն իր շնորհակալական խոսքում նշեց, որ Հայաստանի և Չինաստանի միջև դիվանագիտական հարաբերությունները շատ լավ են ընթանում, քանի որ չինացիները և հայերը հին ազգեր են և միմյանց հասկանում են կես խոսքից: Նա կարևորեց նաև երկու երկրների միջև կապերի հետագա զարգացումը, որը շատ օգտակար է և՛ Չինաստանի, և՛ Հայաստանի համար:

Հանրային խորհրդի անդամ Վազգեն Սաֆարյանը կարևորեց հայ-չինական համագործակցության շրջանակներում գործող երկկողմանի հաջողված նախագծերի մասին:

Միջոցառման շրջանակներում ցուցադրվեցին նաև գրադարանի չինական անկյան գրքերը, որը համալրվեց Չինաստանի դեսպանատան և Չինական մշակույթի և գիտության կենտրոնի կողմից նվիրաբերված գրքերով և համակարգչով: